

# Ի՞ՆՉ Է ԲԱՐՈՅԱՓԻՏՈՒԹԻՒՆը \*

Ըստ Մ'նգերի

## III

Ուժերի հասարակական յարաբերութիւնները

Բարոյականութիւնը յենում է հասարակական վոխսադարձ յարաբերութեանց վերայ, ուստի և կարևոր է ենթարկել այս ֆակտորները յաջորդական ըննութեան: Կասկած չկայ, որ գըլխաւոր ուշադրութեան պէտք է առնել այն հանգամանքները և գործիչների յարաբերութիւնները, որոնք աւելի մեծ և աւելի երկարատև ազդեցութիւն ունին մարդու վարմունքի վերայ:

Այս հասարակական գործոնները հետևեալներն են.

1. Գետական և օրինական կազմակերպութիւն. ներկայ հասարակական կեանքում, երրոր եկեղեցոյ ազդեցութիւնը արդէն յետին տեղն է բռնում, պետութիւնը և իրաւունքը ամենամեծ հասարակական ոյժն է ներկայացնում: Այս երկու ուժերն էլ վերաբերում են այնպիսի գործողութիւններին, որ իրաւատէրը պարտաւորին կատարել տալու համար այդ գործողութիւնը կարող է Փիզիքական ուժին դիմել, որպէս տեղի ունէր ինքնապաշտպանութիւնը իրական կարգ ու սարքի զարդացման նախնական շրջանում, իսկ յետազայ ժամանակներում պետութեան միջոցաւ էր կատարում Փիզիքական ուժին դիմելը: Որովհետև պետութեան և իրաւունքի պահանջները կատարելու ժամանակ ամեն մի պարտաւորեցուցիչ գործողութեան-

\*.) Տես «Հումայ» № 4.

համար միշտ պատրաստ կայ ստիպողականութեան սպառնալիքը, ուստի և այսուղից ուժի և բարոյականութեան միմեանց հետ ունեցած կապը հասկանալի է ամեն մի մարդու համար.

Բայց որովհետև նիւթական ստիպողականութիւնը բարոյապէս վարուելու համար ամենաճիշտ գրաւականն է, ուստի և եկեղեցին և տնտեսական այլ հաստատութիւնները, որոնք սկզբներում ստիպելու ոչ մի միջոց չունեին՝ ինտագայում ձըգտում են իրենց հետևողներին ենթարկել կողմանկի ստիպման։ Պետութիւնը և օրինականութիւնը ընդգրկում են երեք տեսակ հիմնարկութիւնները։ Առաջին՝ պետական կազմակերպութիւն կամ վարչութիւն, սեփականութեան կարգ ու սարք և ընտանիք։ Այս երեք հիմնարկութիւնների սահմանների մէջ է շարժում անձնաւորութեան ամբողջ կեանքը ծննդեան օրից մինչև մահ, որոց կանոններին և ստիպողականութեան ենթարկուած են նրա գլխաւոր վարմունքները։ Սխալ կլինի ի հարկէ ասել թէ պետութիւնը և եկեղեցին գործ ունեն մարդու միմիարն այնպիսի վարմունքների հետ, որոնք կատարում են լոկ ստիպողականութեան անհրաժեշտութիւնից։ Պետութեան և իրաւունքի շրջանը այսքան էլ սղմել չի կարելի։ Ընդհակառակը ամենայն օր այս ֆակտորների շնորհիւ կատարում են գործեր, որ վերաբերում են ազատ բարոյականութեան շրջանին։ Թագաւորները, իշխանները և հարուստները վայելում են բազմաթիւ մարդկանց կողմից յարգանքի, հաւատարմութեան և շատ անգամ անձնուիրութեան արտայայտութիւններ, որ օրէնքի ստիպմամբ չէ կատարում, այլ ազատ կամքով։

Հէնց ընտանեկան շրջանում ամեն բան հիմնուած է ոչ օրէնքի ստիպողականութեան վերայ։

Եթէ օրինակ այն ընտանիքը, որ սէր ու ներողամտութիւն չարտայայտէր իւր ընտանիքներին, այլ տար նրանց այլն, ինչ որ օրէնքով է պահանջում, անկասկած ընտանիք չէր լինի, ալ մի այլանդակ տուն։ Պետութեան և իրաւունքի աղդեցութիւնը համանիշ են համարում ազգութեան և ցեղի աղդեցութեան հետ։ Ընդհանուր օրէնքով բարոյականութեան վերայ ունեցած աղդեցութեան տեսակէտով վերոյիշեալ ֆակտորները ձուլւումեն, որովհետև պետութիւնը տիրապետող ազգութեան և ցեղի կոչումը ու ձգտունները իւր սեփական նպատակներն է ընդունում և ըստ այնմ գործում։ Բայց պետութեան նպատակների և տիրապետող աղդի կամ ցեղի շահերի ձուլումը և միաւորութիւնը խիստ գորեղացնում են կառավարող

շրջանների ճնշելու և խարդախելու սովորական ձգտումները  
և արամազրութիւնը, Սակայն ամեն տեղ, ուր պետութիւնը  
ճնշում է մի որևէ և ազգութիւն, այնուեղ բնականարար ծա-  
գում է առանձին աղջային ցեղային բարոյականութիւն, որ  
մեր ժամանակներում պակաս չէ ազգում մարդկանց վարժունք-  
ների վերայ քան թէ միջին դարերում կրօնական ֆանատիզմը:  
Կարիք չկայ այս ճշմարտութիւնը օրինակներով պարզելու,  
որովհետեւ ամեն ոք գիտէ, որ ազգային և ցեղական գգաց-  
մունքը, մեր ժամանակակից հասարակութեան համար ուժի  
բարոյական ամենազօրեղ ֆակտորներից մէկն է, Պետութիւնից  
և իրաւունքից յետոյ եկեղեցին է երրորդ գլխաւոր ուժը, որով-  
հետեւ մարդկային վարժունքների վերայ մեծ աղդեցութիւն  
ունի:

ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

(Կը շարունակուի)